ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ №1

«25» հունվարի 2021թ. N ՇՄՆ-ԾՁԲ-21/06 պայմանագրի

ք.Երևան «29» «07» 2021թ.

Շրջակա միջավայրի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Գ.Գուլյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պատվիրատու», մի կողմից, և «ՌԵՍՈ» Ապահովագրական ՓԲԸ -ն, ի դեմս տնօրեն Կ.Կոուգլյակի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Կատարող», մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետ՝ «Կողմեր», ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով կողմերի միջև 2021 թվականի հունվարի 25-ին կնքված «ՇՄՆ-ԾՁԲ-21/06» ծածկագրով պայմանագրի 7.5 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1. Կողմերը որոշեցին 2021 թվականի հունվարի 25-ին կնքված «ՇՄՆ-ԾՁԲ-21/06» ծածկագրով պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1.1.1. Պայմանագրի 4.1 կետում **«507 000 (հինգ հարյուր յոթ հազար)»** բառերը փոխարինել **«486 058 (չորս հարյուր ութսունվեց հազար հիսունութ)»** բառերով,

1.1.2. Պայմանագրի վճարման ժամանակացույց հավելվածի **«507 000»** թվերը փոխարինել **«486 058»** թվերով:

2. Այլ պայմաններ

2.1. Համաձայնագրի պայմանները տարածվում են 2021 թվականի հուլիսի 28-ից կողմերի միջև ծագած հարաբերությունների վրա:

2.2. Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, հայերեն լեզվով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Շրջակա միջավայրի նախարարություն	**«ՌԵՍՈ» Ապահովագրական ՓԲԸ**
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք	ք.Երևան, Կոմիտասի պող., շ.62, 93-93/1
ՖՆ գործառնական վարչություն	«Յունիբանկ» ՓԲԸ
ՀՀ 900011018646	ՀՀ 24100024283404
ՀՎՀՀ 02507198	ՀՎՀՀ 02706942
Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղար	«ՌԵՍՈ» Ապահովագրական ՓԲԸ-ի տնօրեն
Գ.Գուլյան	**Կ.Կոուգլյակ**
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Շրջակա միջավայրի նախարարությունը ստորև ներկայացնում է իր կարիքների համար «Տրանսպորտային միջոցների ապահովագրական ծառայությունների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՇՄՆ-ԾՁԲ-21/06» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2021 թվականի հունվարի 25-ին կնքված «ՇՄՆ-ԾՁԲ-21/06» ծածկագրով պայմանագրում 2021 թվականի հուլիսի 29-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության պատճառ՝	28.07.2021թ. դադարեցվել է «ՌԵՍՈ» ԱՓԲԸ-ի հետ կնքած SM394347 համարով ԱՊՊԱ պայմանագիրը,
Փոփոխության նկարագրություն՝	«Nissan X-Trail 2.5» մակնիշի «115LL60» պետհամարանիշով տրանսպորտային միջոցի պարտադիր ապահովագրության ծառայությունների մատուցումը դադարեցվել են սույն թվականի հուլիսի 28-ից,
Փոփոխության հիմնավորում՝	Պայմանագրի 7.5 կետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ **Լիլիթ Զոհրաբյանին**:

Հեռախոս՝ **(011) 818-529:**

Էլ. փոստ՝ **gnumner.mnp@yandex.ru:**

Պատվիրատու՝ **Շրջակա միջավայրի նախարարություն:**